ՄԱՀԱԳՐԱԿԱՆ

Տ. ԳԻՒՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱԳԳԱՇԵԱՆ

(1933–2021)

Ապրիլի 26-ին Փարիզում կեանքի 88-րդ տարում ի Տէր ննջեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երիցագոյն միաբաններից Գերաշնորհ Տ. Գիւտ արքեպիսկոպոս Նագգաշեանը: Սրբազան հայրը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու անդաստանի բազմավաստակ մշակ էր, որը տասնամեակներ շարունակ իր նուիրեալ ծառայութիւնն է բերել մեր Եկեղեցուն եւ հայ ժողովրդին: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու եկեղեցականաց դասը սգում են բազմավաստակ սրբազան հօր մահը:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

Կենսագրութիւն

Գերաշնորհ Տ. Գիւտ եպիսկոպոս Նագգաշեանը (աւազանի անունը՝ Յովհաննէս) ծնուել է 1933 թ. Սիրիայի Հալէպ քաղաքում: Նախնական կրթութիւնն ստացել է տեղի Կիլիկեան վարժարանում:

1948 թ. ուսանել է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի դպրեվանքում:

1955 թ. ձեռնադրուել է կուսակրօն քահանայ:

1955–1960 թթ. ուսուցչական պաշտօններ է վարել Բէյրութի Թեքէեան, Սահակեան եւ Նոր Բարձրագոյն վարժարաններում: Այս ընթացքում հովուական ծառայութիւն է կատարել Բէյրութի եւ Կիպրոսի հայկական եկեղեցիներում:

1958 թ. Ս. Էջմիածնում ստացել է մասնաւոր վարդապետութեան չորս աստիճանները։

1960 թ. նշանակուել է Փարիզի Ս. Յովհաննէս Մկրտիչ մայր եկեղեցու հոգեւոր հովիւ։

1965 թ. արժանացել է ծայրագոյն վարդապետութեան աստիճանի։

1973 թ. սեպտեմբերի 30-ին Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, ձեռամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ստացել է եպիսկոպոսական օծում եւ ձեռնադրութիւն։

1984 թ. Ն. Ս. Օ. Տ. Տ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինութեամբ նշանակուել է Արեւմտեան Եւրոպայի հայրապետական պատուիրակ։

2009 թ. անցել է վաստակած հանգստի։